



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS  
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

**ՓԻՐՈՒՋՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ**

(Գանգատ թիվ 33376/07)

ՎՃԻՌ

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

26 հունիսի, 2012թ.

**ՎԵՐՋՆԱԿԱՆ**

**26/09/2012**

Սույն վճիռը վերջնական է դարձել Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:



**Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի գործով,**

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (Երրորդ Բաժանմունք) Պալատը, հետևյալ կազմով՝

Josep Casadevall, Նախագահ,

Corneliu Bîrsan,

Alvina Gyulumyan,

Egbert Myjer,

Ján Šikuta,

Luis López Guerra,

Nona Tsotsoria, դատավորներ,

և Santiago Quesada, Բաժանմունքի քարտուղար,

2012թ. հունիսի 5-ին կայացած դռնփակ նիստում,

Կայացրեց հետևյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը:

**ԸՆԹԱՑԱԿԱՐԳ**

1. Վարույթը հարուցվել է 2007 թվականի հուլիսի 27-ին «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի («Կոնվենցիա») 34-րդ հոդվածի համաձայն, Հայաստանի քաղաքացի պրն. Կամո Փիրուզյանի («Դիմումատու») կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության բերված թիվ 33376/07 գանգառի հիման վրա:

2. Դիմումատուին ներկայացրել են Երևանում գործունեություն ծավալող փաստաբաններ տկն. Լ. Սահակյանը և պրն. Յ. Վարույանը, ինչպես նաև գործունեություն չծավալող փաստաբան պրն. Ա. Ղազարյանը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը («Կառավարություն») ներկայացրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն Գ. Կոստանյանը:

3. Դիմումատուն պնդել է, մասնավորապես, որ իրեն երկաթե վանդակի մեջ պահելը դատական քննության ընթացքում հանգեցրել է պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, 2007 թվականի փետրվարի 19-ից մարտի 12-ն ընկած ժամանակահատվածում իր կալանքը եղել է անօրինական, դատարանները չեն ներկայացրել նրա երկարատև կալանքը հիմնավորող պատճառներ, նա հնարավորություն չի ունեցել գրավի դիմաց ազատվել կալանքից մեղսագրվող արարքի ծանրության հիմքով, 2006 թվականի դեկտեմբերի 12-ի կալանքի վերաբերյալ գործի քննությամբ չի ապահովվել վարույթի մրցակցությունն ու կողմերի հավասարությունը, հիմնավոր կասկածի բացակայության վերաբերյալ նրա փաստարկները համապատասխանաբար չեն քննարկվել, և

Վերաքննիչ դատարանը հրաժարվել է քննել նրա 2007 թվականի հունվարի 27-ի բողոքը:

4. 2010 թվականի հունվարի 21-ին գանգատն ուղարկվել է Կառավարություն: Որոշվել է նաև իրականացնել գործի ընդունելիության և ըստ էության միաժամանակյա քննություն (Հոդված 29, կետ 1):

## ՓԱՍՏԵՐԸ

### I. ԳՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

5. Դիմումատուն ծնվել է 1978 թվականին և ապրում է Երևանում:

6. Դիմումատուն պնդում է, որ 2006 թվականի հոկտեմբերի 18-ին՝ առավոտյան ժամը 9:20-ին, նա բերման է ենթարկվել Ալավերդի քաղաքի ոստիկանության բաժին՝ նույն օրն ավելի վաղ տեղի ունեցած զինված հարձակման կապակցությամբ: Նա նաև պնդում է, որ իր ձերբակալությունը չի արձանագրվել և նրան բաց են թողել մի քանի ժամ անց:

7. 2006 թվականի հոկտեմբերի 19-ին քրեական վարույթ է հարուցվել դիմումատուի դեմ Քրեական օրենսգրքի (ՔՕ) 175-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ և 4-րդ ենթակետերով: Վարույթը հարուցվել է դիմումատուի հետ նույն շենքում բնակվող տուժող Գ.Հ.-ի բողոքի հիման վրա: Համաձայն Գ.Հ.-ի խոսքերի՝ 2006 թվականի հոկտեմբերի 18-ի երեկոյան ժամը 20.45-ին դիմումատուն, ով դիմակով է եղել, հարձակվել է իր վրա շենքի առաջին հարկում, հարվածել իր գլխին մետաղական ձողով և հափշտակել ճամպուրակը, որը լի է եղել թանկարժեք զարդերով:

8. Նույն օրը երեկոյան ժամը 20.00-ին դիմումատուն ձերբակալվել է վերոնշյալ արարքը կատարելու կասկածանքով: Ձերբակալման արձանագրությունը ստորագրվել է դիմումատուի կողմից:

9. 2006 թվականի հոկտեմբերի 22-ին դիմումատուին մեղադրանք է առաջադրվել վերոնշյալ հոդվածով ավազակության մեջ: Մեղադրական եզրակացության մեջ նշված էր, որ իրադարձություններից հետո տուժողը հետապնդել է դիմումատուին, ինչի արդյունքում նա ստիպված է եղել գցել ճամպուրակը և դիմել փախուստի: Այն ստորագրվել է դիմումատուի կողմից:

10. Նույն ամսաթվին քննիչը միջնորդություն է ներկայացրել Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ դիմումատուին երկու ամիս ժամկետով կալանավորելու համար՝ այն հիմնավորմամբ, որ նախկինում նա ունեցել է դատվածություն, մեղսագրվող արարքը հանդիսանում է ծանր հանցագործություն, ինչպես նաև՝ նա կթաքնվի վարույթ իրականացնող մարմնից, եթե գտնվի ազատության մեջ:

11. Նույն ամսաթվին Մարզի ընդհանուր իրավասության դատարանը քննության է առել և բավարարել քննիչի միջնորդությունը՝ գտնելով, որ գործի նյութերը բավարար հիմքեր են տալիս ենթադրելու, որ դիմումատուն կարող է թաքնվել և խոչընդոտել վարույթի իրականացմանը՝ հղում կատարելով մեղսագրվող հանցանքի բնույթին և վտանգավորության աստիճանին:

12. 2006 թվականի դեկտեմբերի 8-ին քննիչը դիմումատուի կալանքի ժամկետը երկու ամսով երկարաձգելու միջնորդություն է ներկայացրել: Միջնորդության մեջ նշված է եղել, որ քննության ընթացքում կատարվել են մի շարք փորձաքննություններ, այդ թվում նաև՝ քիմիական և կենսաբանական, ինչպես նաև հետքաբանական փորձաքննություն: Այնուամենայնիվ, լրացուցիչ կենսաբանական փորձաքննություն կատարելու և մեղադրանքը փոխելու ահրաժեշտություն է առաջ եկել: Քննիչը պնդել է, որ եթե դիմումատուն ազատ արձակվի, նա կթաքնվի, քանի որ կատարել է ծանր հանցագործություն և կարող է կատարել այլ հանցանքներ, քանի որ նախկինում ունեցել է դատվածություն: Նա չի ընդունել իր մեղքը և, հետևաբար, կխոչընդոտի վարույթի իրականացմանը: Իր միջնորդությանը կից՝ քննիչը ներկայացրել է գործով մի շարք նյութեր, ինչպիսիք են քրեական գործ հարուցելու մասին որոշումը, ձերբակալության արձանագրությունը և մեղադրանք առաջադրելու մասին որոշումը:

13. 2006 թվականի դեկտեմբերի 12-ին Մարզի ընդհանուր իրավասության դատարանը քննության է առել քննիչի միջնորդությունը: Դիմումատուն ներկա է գտնվել միջնորդության քննությանը և նստած է եղել իր պաշտպանի կողքին:

14. Դիմումատուն առարկել է քննիչի միջնորդության դեմ և խնդրել դատարանից իրեն գրավով ազատ արձակել: Նա ի սկզբանե պնդել է, որ չի եղել հիմնավոր կասկած, որ հանցանքը հենց ինքն է կատարել: Այն փաստը, որ նախկինում նա կատարել է հանցանք չի արդարացնում իր կալանավորումն այս կոնկրետ գործով: Այս կապակցության Մարզի ընդհանուր իրավասության դատարանը նշել է, որ նա չի քննել գործն ըստ էության, այդ թվում՝ դիմումատուի մեղքի առկայության հարցը, այլ քննել է դիմումատուի կալանքի ժամկետը երկարաձգելու մասին միջնորդության հիմնավորվածությունը: Կա տարբերություն մեղքի և հիմնավոր կասկածի առկայության միջև:

15. Դիմումատուն պնդել է, որ իր կալանավորումը հիմնավորող որևէ հստակ ապացույց չի եղել: Քննիչը, ի պատասխան դիմումատուի խնդրանքին ներկայացնելու որևէ ապացույց, ասել է, որ այդպիսի ապացույց չկա: Նա նշել է, որ կայացվել են մի շարք փորձաքննություններ կատարելու մասին որոշումներ և անհրաժեշտ է վերցնել արյան նմուշներ՝ պարզելու համար, թե արդյոք դիմումատուի արյան խումբը համընկնում է տուժողի կոշիկների վրա հայտնաբերված արյան հետքերի հետ: Նախագահող դատավորն այնուհետև խնդրել է քննիչին ներկայացնել գործով բոլոր նյութերը: Կարճ ժամանակ անց՝ դատավորը հեռացել է խորհրդակցական սենյակ:

16. Մարզի ընդհանուր իրավասության դատարանը, քննելով քննիչի միջնորդությունը և դրա հիմնավորվածությունը հաստատող նյութերը, որոշում է կայացրել բավարարել միջնորդությունը մասամբ և երկարաձգել դիմումատուի կալանքի ժամկետը մեկ ամսով՝ մինչև 2007 թվականի հունվարի 19-ը՝ այն հիմնավորմամբ, որ 2006 թվականի դեկտեմբերի 8-ին քննիչը որոշում է կայացրել կենսաբանական փորձաքննություն նշանակելու մասին, ինչը դեռ ավարտված չէր: Վկայակոչելով Քրեական դատավարության օրենսգրքի (ՔԴՕ) 143-րդ հոդվածի 1-ին մասը՝ դատարանը որոշում է կայացրել մերժել դիմումատուի միջնորդությունը գրավով ազատ արձակվելու մասին՝ այն հիմնավորմամբ, որ նա մեղադրվում է ծանր հանցագործություն կատարելու մեջ:

17. 2006 թվականի դեկտեմբերի 27-ին դիմումատուն ներկայացրել է բողոք: Նա նշել է, *inter alia*, որ չկան հիմնավոր կասկածներ առ այն, որ հանցանքը հենց նա է կատարել: Քննիչի կողմից իր միջնորդությունը հիմնավորող փաստաթղթերը, ինչպիսիք էին վարույթ հարուցելու մասին որոշումը, ձերբակալության արձանագրությունը և մեղադրանք առաջադրելու մասին որոշումը, բավարար չեն հիմնավոր կասկածի առկայությունը հաստատելու համար: Ավելին, Մարզի ընդհանուր իրավասության դատարանը հրաժարվել է ընդհանուր առմամբ անդրադառնալ հիմնավոր կասկածի առկայության խնդրին: Դիմումատուն այնուհետև վիճարկել է այն պնդումը, որ նա կարող էր նոր հանցանքներ կատարել, ինչը հիմնված էր բացառապես այն հանգամանքի վրա, որ նա նախկինում դատվածություն է ունեցել: Ավելին, չկար որևէ կոնկրետ ապացույց, որ նա կթաքնվի վարույթ իրականացնող մարմիններից, իսկ լրացուցիչ կենսաբանական փորձաքննություն կատարելու անհրաժեշտությունն ինքնին չէր կարող հիմք հանդիսանալ նրա կալանքի ժամկետի երկարաձգման համար: Վերջապես, դիմումատուն պնդել է, որ Մարզի ընդհանուր իրավասության դատարանում գործի քննությունը մրցակցային չէր և խախտում էր կողմերի հավասարության սկզբունքը, քանի որ նախագահող դատավորը, գործի քննության ընթացքում քննության չառնելով հիմնավոր կասկածի առկայությունը հիմնավորող որևէ ապացույց, խորհրդակցական սենյակ հեռանալուց առաջ քննիչի կողմից ստացել է գործի բոլոր նյութերը: Դիմումատուն այդ նյութերին ո՛չ ծանոթանալու, ո՛չ էլ դրանց հետ կապված որևէ դիրքորոշում հայտնելու հնարավորություն չի ունեցել:

18. 2007 թվականի հունվարի 25-ին Քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանն ուժի մեջ է թողել Մարզի ընդհանուր իրավասության դատարանի որոշումը: Այն նշել է, որ վարույթ իրականացնող մարմինները ներկայացրել են հստակ ապացույցներ, որոնք հաստատել են դիմումատուի մեղքը, ինչն էլ ապացուցում է նրա մասնակցությունն արարքին: Այսպիսով, առկա է եղել հիմնավոր կասկած, որ հենց դիմումատուն է կատարել հանցանքը: Վերաքննիչ դատարանը գտել է, որ դիմումատուի կալանքի ժամկետը

երկարաձգելու անհրաժեշտություն եղել է՝ պատճառաբանելով մեղսագրվող հանցանքի բնույթով և վտանգավորության աստիճանով, ինչպես նաև այն փաստով, որ նա կարող էր թաքնվել և խոչընդոտել վարույթի իրականացմանը: Գրավով ազատվելու միջնորդությունը մերժվել է նույն հիմնավորմամբ: Մարզի ընդհանուր իրավասության դատարանի որոշումները կալանքի ժամկետը երկարաձգելու բավարարելու և գրավով ազատվելու միջնորդությունները մերժելու մասին եղել են հիմնավորված և պատճառաբանված և այդ որոշումը փոփոխելու հիմքեր չեն եղել:

19. 2007 թվականի հունվարի 9-ին քննիչը դիմումատուի կալանքի ժամկետը մեկ ամսով երկարաձգելու միջնորդություն է ներկայացրել նախկինում բերված նույն հիմնավորմամբ:

20. 2007 թվականի հունվարի 12-ին Մարզի ընդհանուր իրավասության դատարանը քննել է ներկայացված միջնորդությունը: Դիմումատուն ներկա է եղել քննությանը և նստած է եղել իր պաշտպանի կողքին: Նա առարկել է քննիչի ներկայացրած միջնորդության դեմ և խնդրել դատարանին իրեն գրավով ազատ արձակել: Մարզի ընդհանուր իրավասության դատարանը որոշում է կայացրել միջնորդությունը բավարարելու և կալանքի ժամկետը մեկ ամսով՝ մինչև 2007 թվականի փետրվարի 19-ը երկարաձգելու մասին՝ այն հիմնավորմամբ, որ քննիչը որոշում է կայացրել մի շարք փորձաքննություններ նշանակելու մասին, որոնք դեռ ավարտված չեն: Դատարանը մերժել է դիմումատուի միջնորդությունը գրավով ազատվելու մասին նախկինում բերված նույն հիմնավորմամբ:

21. 2007 թվականի հունվարի 27-ին դիմումատուն բողոք է ներկայացրել:

22. 2007 թվականի փետրվարի 8-ին դիմումատուին ներկայացված մեղադրանքը փոփոխվել է: Սկզբնական մեղադրանքից բացի դիմումատուին մեղադրանք է առաջադրվել նաև հանցագործությունների ռեցիդիվի և սպանության փորձի հատկանիշներով:

23. 2007 թվականի փետրվարի 16-ին նախաքննությունն ավարտվել է, և դիմումատուին իրավունք է տրվել ծանոթանալ գործի նյութերին:

24. 2007 թվականի փետրվարի 19-ին լրացել է դիմումատուի՝ 2007 թվականի հունվարի 12-ի որոշմամբ սահմանված կալանքի ժամկետը:

25. Նույն ամսաթվին դատախազը հաստատել է մեղադրական եզրակացությունը և գործն ուղարկվել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան ըստ էության քննության համար:

26. Նույն ամսաթվին Վերաքննիչ դատարանը որոշել է առանց քննության թողնել դիմումատուի 2007 թվականի հունվարի 27-ի բողոքն այն հիմքով, որ նախաքննությունն ավարտվել է, և գործն ուղարկվել է ընդհանուր իրավասության դատարան:

27. 2007 թվականի մարտի 5-ին դիմումատուն միջնորդություն է ներկայացրել ընդհանուր իրավասության դատարան՝ նշելով, որ իր կալանքն անօրինական է՝ սկսած 2007 թվականի փետրվարի 19-ից, և

խնդրելով իրեն ազատ արձակել: Նման միջնորդություն է ներկայացվել կալանավայրի պետին, որտեղ պահվում էր դիմումատուն:

28. Կալանավայրի պետը 2007 թվականի մարտի 6-ի նամակով մերժել է խնդրանքը՝ վկայակոչելով ՔԴՕ-ի 138-րդ հոդվածը՝ այն հիմնավորմամբ, որ գործն ուղարկվել է ընդհանուր իրավասության դատարան:

29. 2007 թվականի մարտի 12-ին ընդհանուր իրավասության դատարանը մերժել է դիմումատուի 2007 թվականի մարտի 5-ի միջնորդությունը՝ նույն հիմքերով:

30. Նույն ամսաթվին ընդհանուր իրավասության դատարանը որոշում է կայացրել դիմումատուի վերաբերյալ քրեական գործը քննության նշանակել: Որոշմամբ դիմումատուի կալանքը թողնվել է անփոփոխ:

31. Մարզի ընդհանուր իրավասության դատարանում դատական քննության ընթացքում՝ դատական նիստերի դահլիճում դիմումատուն պահվել է մոտավորապես 4,5 քառ. մետր տրամագծով երկաթե վանդակում: Նա ներկայացվել է պաշտպանի կողմից:

32. 2007 թվականի մարտի 21-ի նիստին դիմումատուն միջնորդել է վանդակից իրեն ազատ արձակվելու մասին: Մարզի ընդհանուր իրավասության դատարանը որոշում է կայացրել հետաձգել հարցի քննությունը:

33. 2007 թվականի մարտի 30-ի նիստին դիմումատուն նախագահող դատավորին միջնորդություն է ներկայացրել ինքնաբացարկ հայտնելու մասին: Նա նշել է, *inter alia*, որ իրեն երկաթե վանդակում պահելը անմարդկային և պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք է, որը նաև խախտում է կողմերի հավասարության սկզբունքն ու անմեղության կանխավարկածը, ինչի հետ կապված նախագահող դատավարը որևէ քայլ չի կատարել վերացնելու համար իր այս իրավունքի հանդեպ ոտնձգությունները: Պարզվում է, որ նրա միջնորդությունը չի բավարարվել՝ հիմնավորված չլինելու հիմքով:

34. Դիմումատուն պնդել է, որ միջնորդությունը մերժելուց հետո նա կրկին խնդրել է իրեն ազատ արձակել վանդակից, բայց դատարանը մերժել է նրա խնդրանքը՝ պատճառաբանելով, որ այլ կերպ անհնար կլինի ապահովել նիստերի դահլիճի անվտանգությունը: Կառավարությունը պնդել է, որ միջնորդությունը մերժելուց հետո դիմումատուի կողմից այլևս ոչ մի քայլ այդ ուղղությամբ չի կատարվել:

35. Ընդհանուր իրավասության դատարանում գործի քննության ողջ ընթացքում դիմումատուն պահվել է երկաթե վանդակում: Քննությունը տևել է գրեթե ինն ամիս և ներառել է քսանմեկ դռնբաց դատական նիստ, որոնց դիմումատուն ներկա է գտնվել: Նիստերը տևել են քսանհինգ րոպեից յոթը ժամ տևողությամբ: Գործն Ալավերդիում առաջացրել է հանրային հետաքրքրություն և նիստերին ներկա են գտնվել դիմումատուի ընտանիքի անդամները, ընկերները և հանրության այլ անդամներ, ներառյալ՝ քաղաքի այլ բնակիչներ և բազմաթիվ ուսանողներ:

36. 2007 թվականի հուլիսի 24-ին և օգոստոսի 18-ին դիմումատուն բողոքներ է ներկայացրել օրենքի դրույթների վերաբերյալ 2007 թվականի հունվարի 25-ի և փետրվարի 19-ի որոշումների դեմ:

37. 2007 թվականի օգոստոսի 8-ին կայացած նիստին դիմումատուն միջնորդել է Մարզի ընդհանուր իրավասության դատարանին վերացնել իր կալանքի մասին որոշումը կամ ազատել իրեն գրավի դիմաց: Նա պնդել է, որ կալանքի տակ է արդեն գրեթե տասը ամիս: Իրեն կալանքի տակ երկարատև պահելու հիմքեր այլևս չկան, քանի որ բոլոր վկաներն արդեն հարցաքննվել են և նա չի կարող խոչընդոտել գործի քննությանը: Մեղադրողն առարկել է միջնորդության դեմ՝ նշելով, որ դիմումատուն չի կարող գրավի դիմաց ազատվել, քանի որ նա մեղադրվում է ծանր հանցանքի կատարման մեջ: Մարզի ընդհանուր իրավասության դատարանը որոշում է կայացրել մերժել դիմումատուի միջնորդությունն այն հիմնավորմամբ, որ գործը դեռ ավարտված չէ, և նրա կալանքը վերացնելու կամ գրավով ազատելու համար բավարար հիմքեր չկան:

38. 2007 թվականի սեպտեմբերի 6-ին Վճռաբեկ դատարանը վերադարձրել է դիմումատուի 2007 թվականի հուլիսի 24-ի և օգոստոսի 18-ի բողոքները՝ ըստ էության քննության համապատասխան պայմանների բացակայության հիմքով:

39. Չպարզված օրը մեղադրողը հրաժարվել է մեղադրանքից և ընդհանուր իրավասության դատարանին հայտարարել դիմումատուի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին՝ այն հիմնավորմամբ, որ առկա ապացույցները բավարար չեն նրա դեմ ներկայացրած մեղադրանքները պաշտպանելու համար:

40. 2007 թվականի դեկտեմբերի 5-ին Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը որոշում է կայացրել դիմումատուի վերաբերյալ քրեական գործը՝ ՔԴՕ 35-րդ հոդվածի 4-րդ մասով կարճելու մասին:

41. Նույն ամսաթվին դիմումատուն ազատվել է կալանքից:

## II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

### **Ա. Քրեական օրենսգիրքը (ուժի մեջ է 2003 թվականի օգոստոսի 1-ից)**

42. 19-րդ հոդվածի համաձայն՝ ըստ բնույթի և հանրության համար վտանգավորության աստիճանի՝ հանցագործությունները դասակարգվում են՝ ոչ մեծ ծանրության, միջին ծանրության, ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների: Առավելագույնը հինգ տարի ազատազրկմամբ դատապարտվող դիտավորյալ արարքները դասակարգվում են միջին ծանրության հանցագործությունների մեջ, մինչդեռ առավելագույնը տասը տարի ազատազրկմամբ դատապարտվող արարքները համարվում են ծանր հանցագործություններ:



43. 175-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 4-րդ կետերի համաձայն՝ ավազակությունը, այն է՝ ուրիշի գույքը հափշտակելու նպատակով հարձակումը, որը կատարվել է կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով՝ խոշոր չափերով գույք հափշտակելու նպատակով և զենք կամ որպես զենք օգտագործվող այլ առարկաների գործադրմամբ՝ պատժվում է ազատազրկմամբ վեցից տասը տարի ժամկետով:

## **Բ. Քրեական դատավարության օրենսգիրքը (ուժի մեջ է 1999 թվականի հունվարի 12-ից)**

### *1. Բողոքարկման իրավունք*

44. 6-րդ հոդվածի 10-րդ կետի համաձայն՝ վերջնական որոշումը քրեական վարույթ իրականացնող մարմնի յուրաքանչյուր որոշումն է, որը բացառում է գործով վարույթն սկսելը և շարունակելը, կամ լուծում է գործն ըստ էության:

45. 65-րդ հոդվածի 2-րդ մասի 20-րդ կետի համաձայն՝ մեղադրյալն իրավունք ունի բողոքարկել հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի գործողությունները և որոշումները, այդ թվում՝ դատավճիռը և դատարանի այլ վերջնական որոշումը:

46. 384-րդ հոդվածի համաձայն, որն ուժի մեջ էր քննարկվող ժամանակահատվածում, բողոք կարող էր բերվել միայն առաջին ատյանի դատարանի որոշումների դեմ:

### *2. Կալանք*

47. 134-րդ հոդվածի համաձայն՝ խափանման միջոցները հարկադրանքի միջոցներ են, որոնք կիրառվում են կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ՝ քրեական գործով վարույթի ընթացքում նրանց ոչ պատշաճ վարքագիծը կանխելու և դատավճռի կատարումն ապահովելու նպատակով: Խափանման միջոցները ներառում են, *inter alia*, կալանավորումը և գրավը:

48. Համաձայն 135-րդ հոդվածի՝ դատարանը, դատախազը, քննիչը կամ հետաքննության մարմինը խափանման միջոց կարող են կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է՝ 1) թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից, 2) խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով, 3) կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք, 4) խուսափել

քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց, 5) խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը: Խափանման միջոց կիրառելու անհրաժեշտության կամ կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ դրա տեսակն ընտրելու հարցը լուծելիս հաշվի են առնվում՝ 1) վերագրվող արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը, 2) կասկածյալի կամ մեղադրյալի անձը, 3) տարիքը և առողջական վիճակը, 4) սեռը, 5) զբաղմունքի տեսակը, 6) ընտանեկան դրությունը և խնամարկյալների առկայությունը, 7) գույքային դրությունը, 8) բնակության մշտական վայրի առկայությունը, 9) այլ էական հանգամանքներ:

49. 136-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ կալանավորումը և գրավը կիրառվում են միայն դատարանի որոշմամբ՝ քննիչի կամ դատախազի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ՝ դատարանում քրեական գործը քննելիս: Գրավը կալանավորման փոխարեն դատարանը կարող է կիրառել նաև պաշտպանության կողմի միջնորդությամբ:

50. 138-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քրեական գործով մինչդատական վարույթում կալանքի տակ պահելու ժամկետը չի կարող լինել երկու ամսից ավելի, բացառությամբ ՔԴԾ նախատեսված դեպքերի: Քրեական գործով մինչդատական վարույթում կալանքի տակ պահելու ժամկետը կասեցվում է այն օրը, երբ դատախազը քրեական գործն ուղարկում է դատարան, կամ կալանավորումը՝ որպես խափանման միջոց վերացվում է:

51. 143-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ գրավը ոչ մեծ և միջին ծանրության հանցագործության համար մեղադրվողին կալանքից ազատելու համար դրամի, արժեթղթերի, այլ արժեքների ձևով դատարանի դեպոզիտ մեկ կամ մի քանի անձանց կատարած ներդրումն է՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովվելու նպատակով:

52. 285-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարաձգելու դատախազը կամ քննիչը միջնորդության մեջ պետք է շարադրվեն այն շարժառիթները և հիմքերը, որոնց հիման վրա առաջացել է մեղադրյալին կալանավորելու անհրաժեշտություն: Որոշմանը կցվում են միջնորդության հիմնավորվածությունը հաստատող նյութերը:

### *3. Գործի նյութերին ծանոթանալը*

53. 65-րդ հոդվածի 2-րդ մասի 16-րդ կետով սահմանվում է, որ մեղադրյալն իրավունք ունի նախաքննության ավարտման պահից ծանոթանալ գործի բոլոր նյութերին:

54. 73-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով սահմանվում է, որ պաշտպանը, նախաքննության ավարտման պահից, իրավունք ունի

ծանոթանալ գործի բոլոր նյութերին, դրանցից պատճեններ հանել և գործից դուրս գրել ցանկացած ծավալի ցանկացած տեղեկություն:

55. 201-րդ հոդվածով սահմանվում է, որ նախնական քննության տվյալները ենթակա են հրապարակման միայն գործի վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ:

56. 265-րդ հոդվածով սահմանվում է, որ մեղադրական եզրակացություն կազմելու համար հավաքված ապացույցները բավարար համարելով՝ քննիչն այդ մասին հաղորդում է մեղադրյալին և որոշում է գործի նյութերի հետ վերջինիս ծանոթանալու ժամանակը և տեղը:

#### *4. Գործով վարույթը դադարեցնելը*

57. 35-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ մեղադրողը, դատարանում հայտնաբերելով քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ, պարտավոր է հայտարարել ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին: Ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին մեղադրողի հայտարարությունը դատարանի համար քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու հիմք է:

## ԻՐԱՎՈՒՆՔԸ

### Ի. ԿՈՆՎԵՆՏԻԱՅԻ 3-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄ

58. Դիմումատուն բողոքել է, որ դատական քննության ընթացքում իրեն երկաթե վանդակի մեջ պահելը խախտում է Կոնվենցիայի 3-րդ հոդվածը, որը սահմանում է.

«Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգման կամ անմարդկային կամ պատիվն ու նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»:

### **Ա. Ընդունելիություն**

#### *1. Ներպետական միջոցների սպառում*

59. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուն չի սպառել ներպետական միջոցները: 2007 թվականի մարտի 30-ին իր միջնորդության մերժումից հետո դիմումատուն այլևս երբեք հարցին չի անդրադարձել՝ չնայած այն հանգամանքին, որ ավելի, քան քսան նիստ է հրավիրվել Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանում: Ավելին՝ նա չի բարձրացրել հարցը վերադաս դատարանի առջև իր

վերաքննիչ բողոքում՝ չնայած այն հանգամանքին, որ դրա իրավունքն ուներ՝ համաձայն ՔԴՕ-ի 65-րդ հոդվածի:

60. Դիմումատուն նշել է, որ 2007 թվականի մարտի 21-ին և 30-ին կայացրած որոշումները միջանկյալ որոշումներ էին և բողոքարկման ենթակա չէին:

61. Դատարանը կրկնում է, որ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված իրավական պաշտպանության ներպետական միջոցները սպառելու կանոնը պարտավորեցնում է միջազգային դատական մարմնի առջև Պետության դեմ վարույթ հարուցել ցանկացող անձանց սկզբում օգտագործել ազգային իրավական համակարգում առկա միջոցները՝ այդպիսով ազատելով պետություններին միջազգային մարմնի առջև պատասխան տալու պարտականությունից՝ մինչև նրանք հնարավորություն կունենան հարցը քննարկել իրենց սեփական իրավական համակարգերում: Կանոնին համապատասխանելու համար դիմումատուն պետք է օգտվի այնպիսի միջոցներից, որոնք առկա և բավարար են ենթադրյալ խախտումները վերականգնելու համար (տե՛ս, ի թիվս այլոց, *Assenov and Others v. Bulgaria*, թիվ 24760/94, § 85, ECHR 1999-VIII):

62. Սպառված պետք է լինեն միայն իրավական պաշտպանության այն միջոցները, որոնք արդյունավետ են: Կառավարությունը, եթե վիճարկում է սպառված չլինելու հարցը, կրում է պարտավորության բեռը՝ Դատարանին հիմնավորելու, որ միջոցը եղել է արդյունավետ, քննարկվող ժամանակահատվածում եղել է տեսականորեն և գործնականորեն առկա, այսինքն՝ որ այն եղել է հասանելի, ի վիճակի է եղել բավարարելու դիմումատուի պահանջները և առաջարկել է հաջողության ողջամիտ երաշխիքներ: Եթե ապացուցման այս պարտականությունը բավարարված է, ապա դիմումատուի վրա է դրվում հիմնավորելու պարտականությունը, որ Կառավարության առաջարկած միջոցները նրա կողմից փաստացիորեն սպառված են եղել, կամ գործի կոնկրետ հանգամանքներից ելնելով եղել են ոչ համաչափ և ոչ արդյունավետ, կամ առկա են եղել հատուկ հանգամանքներ, որոնց առկայության պայմաններում նա ազատվել է այս պարտականությունից (տե՛ս *Kalashnikov v. Russia* (որոշում), թիվ 47095/99, 18 Սեպտեմբերի, 2001 թ. և *Melnik v. Ukraine*, թիվ 72286/01, § 67, 28 մարտի, 2006 թ.):

63. Սույն գործով Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանում գործի քննության ժամանակ դիմումատուին պահել են երկաթե վանդակում: Պարզվում է՝ որևէ առանձնահատուկ ընթացակարգ չի եղել ամբաստանյալի համար, ով ցանկացել է ազատվել երկաթե վանդակից: Սա ինքնին կասկածներ է հարուցում առ այն, թե արդյոք եղել են դիմումատուի կողմից սպառման ենթակա որևէ արդյունավետ միջոցներ: Ամեն դեպքում, գործի նյութերը ցույց են տալիս, որ դիմումատուն դիմել է ընդհանուր իրավասության դատարան առնվազն երկու անգամ՝ խնդրելով, *inter alia*, ազատ արձակել իրեն երկաթե վանդակից, և պնդելով, որ իրեն այնտեղ պահելը

անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք է: Առաջին անգամ դիմումատուի խնդրանքին պատասխան չի տրվել, իսկ ապա որոշվել է հարցի քննարկումը հետաձգել, և Մարզի ընդհանուր իրավասության դատարանը հարցին չի անդրադարձել երկրորդ անգամ ևս (տե՛ս վերևում՝ § 32 և § 33): Այսպիսով՝ անգամ ենթադրելով, որ դիմումատուի կողմից նախաձեռնած ընթացակարգը պատշաճ ուղի էր այս բնույթի խնդրի սպառման համար, այն ոչ արդյունավետ է եղել նրա կոնկրետ գործի պարագայում:

64. Վերջապես, Դատարանը նշում է, որ ներպետական օրենսդրությունն իսկապես չի նախատեսել քննարկվող որոշման դեմ բողոքարկման հնարավորություն: Այն նշում է, որ Կառավարության կողմից վկայակոչված ՔԴՕ-ի 65-րդ հոդվածը սահմանում է մեղադրյալի բողոք բերելու ընդհանուր իրավունքը: Այնուամենայնիվ, ՔԴՕ ավելի առանձնահատուկ դրույթները, մասնավորապես 384-րդ հոդվածը, բացառում են նման որոշումների բողոքարկումը Վերաքննիչ դատարան:

65. Վերջապես, անգամ ենթադրելով, որ կային սպառման ենթակա արդյունավետ միջոցներ, կարելի է համարել, որ դիմումատուն արել է տվյալ հանգամանքներում իրենից ողջամտորեն ակնկալվող ամեն ինչ: Հետևաբար, Կառավարության առարկությունը՝ կապված միջոցները չսպառելու հետ, պետք է մերժվի:

## *2. Եզրակացություն*

66. Դատարանը նշում է, որ սույն բողոքը Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի (ա) ենթակետի իմաստով ակնհայտ անհիմն չէ: Դատարանն այնուհետև նշում է, որ այն անընդունելի չէ որևէ այլ հիմքով: Հետևաբար այն պետք է հայտարարվի ընդունելի:

## **Բ. Գործի ըստ էության քննություն**

### *1. Կողմերի փաստարկները*

67. Կառավարությունը պնդել է, որ իշխանությունները նպատակ չեն ունեցել դիմումատուի նկատմամբ ցուցաբերել այնպիսի վերաբերմունք, որը կհակասեր 3-րդ հոդվածին: Նրան երկաթե վանդակի մեջ պահելը համաչափ միջոց է եղել՝ ելնելով այն փաստից, որ նա նախկինում ունեցել է դատվաճություններ (1997, 2001 և 2002 թվականներ), ինչպես նաև՝ գործի կոնկրետ հանգամանքներից և դիմումատուի անձը բնութագրող հատկանիշներից:

68. Դիմումատուն նշել է, որ իր նախկին դատվաճությունները, որոնք եղել են ոչ բռնի հանցանքների համար, մասնավորապես՝ գողության, , բավարար չեն եղել իրեն երկաթե վանդակում պահելը արդարացնելու համար: Դատավորը, մերժելով նրան վանդակից ազատ արձակելու

խնդրանքը, ընդհանուր հղում է կատարել անվտանգության հանգամանքների վրա: Նա ցուցադրվել է հանրությանը գործի քննության մոտ ինն ամիսների ընթացքում, ինչը նվաստացրել է իրեն իր աչքերում, իր ընտանիքի և ընկերների, ինչպես նաև փոքր քաղաք հանդիսացող և քիչ բնակչություն ունեցող Ալավերդու լայն հանրության աչքերում: Ոչինչ իր վարքագծի մեջ չի արդարացրել այդպիսի միջոցի կիրառումը:

## 2. Դատարանի գնահատականը

69. Դատարանը, նախ, դիտարկում է, որ որ Կոնվենցիայի 3-րդ հոդվածով երաշխավորվում է ժողովրդավարական հասարակության ամենահիմնարար արժեքներից մեկը: Այն բացարձակ կերպով արգելում է խոշտանգումը կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը՝ անկախ զոհի վարքագծից (տե՛ս *ի*, թիվս այլոց, *Labita v. Italy [GC]*, թիվ 26772/95, § 119, ECHR 2000-IV):

70. Դատարանը նշում է, որ այն նախկինում արձանագրել է 3-րդ հոդվածի խախտում մի գործում, որտեղ դիմումատուն գործի քննության ընթացքում պահվել է երկաթե վանդակում (տե՛ս *Ashot Harutyunyan v. Armenia*, թիվ 34334/04, §§ 126-29, 15 հունիսի, 2010): Սույն գործի հանգամանքները նման են: Մասնավորապես, հակառակ Կառավարության պնդումների՝ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից դիմումատուին երկաթե վանդակում տեղավորելու և պահելու հատուկ պատճառներ, բացի նրա նախկին դատվածություններից և անձը բնութագրող հատկանիշներից, չեն մատնանշվել: Ավելին, պարզվում է, որ Մարզի ընդհանուր իրավասության դատարանը որևէ որոշում դիմումատուի՝ իրեն վանդակից ազատելու միջնորդության կապակցությամբ չի ընդունել:

71. Ամեն դեպքում, Դատարանը նշում է, որ դիմումատուի վարքագծում ոչինչ չէր կարող արդարացնել այդպիսի միջոցի կիրառումը: Իր կալանքի վերաբերյալ դատական քննության ընթացքում որտեղ նրա նկատմամբ անվտանգության և ոչ մի միջոց չի կիրառվել, դիմումատուն իրեն դրսևորել է պատշաճ ձևով և որևէ պատահար չի արձանագրվել (տե՛ս *վերը*՝ § 13 և § 20): Դա ճիշտ է, որ դիմումատուն նախկինում ունեցել է դատվածություններ և մեղադրվել է հանցավոր բռնի արարքի կատարելու մեջ: Այնուամենայնիվ, գործի նյութերում ոչինչ չի վկայում այն մասին, որ նրա նախկին դատվածությունները եղել են բռնի հանցագործությունների համար: Ինչ վերաբերում է նրան առաջադրված մեղադրանքի բնույթին, ապա Դատարանը նշում է, որ այս հանգամանքն ինքնին բավարար չէր անվտանգության այսպիսի խիստ միջոցի կիրառումն արդարացնելու համար:

72. Այսպիսով՝ դիմումատուին երկաթե վանդակում պահելու վերաբերյալ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից որևէ հիմնավորման և առանձնահատուկ պատճառի նշման

բացակայությունը ստիպում է Դատարանին հավատալ, որ, ինչպես և *Աշոփ Հարությունյանի* գործով, այս գործողությունները թելադրված էին ոչ թե նրա թաքնվելու կամ բռնության կիրառման որևէ իրական վտանգով, այլ պարզապես այն հանգամանքով, որ դա այն նստելու տեղն էր, որտեղ նա՝ որպես քրեական գործով ամբաստանյալ, պետք է նստեր (նույն տեղում՝ § 127):

73. Դատարանը նշում է, որ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանում քննությունը տևել է 2007 թվականի մարտից մինչև դեկտեմբեր, և հրավիրվել է առնվազն քսանմեկ դռնբաց նիստ: Նիստերը տևել են քսանհինգ րոպեից յոթը ժամ: Այս ողջ ընթացքում դիմումատուն ցուցադրվել է հանրությանը՝ ներառյալ իր ընտանիքին և ընկերներին, երկաթե վանդակում: Դատարանը գտնում է, որ դատական քննության նման դաժան պատկերը սովորական դիտողին կարող էր ստիպել հավատալ, որ դատարանում առանձնապես վտանգավոր հանցագործ էր: Ապա այն համաձայնում է դիմումատուի հետ, որ հանրային նման ցուցադրումը նվաստացնում էր նրան եթե ոչ հանրության, ապա իր սեփական աչքերում, և նրա մեջ առաջացնում ստորացման զգացում: Ավելին, այսպիսի նվաստացնող վերաբերմունք հեշտորեն կարող էր ազդել դիմումատուի կենտրոնացման և մտավոր զգոնության ունակությունների վրա գործի քննության ընթացքում՝ այնպիսի կարևոր հարցի առնչությամբ, ինչպիսին նրա՝ քրեական պատասխանատվության ենթարկվելու հարցն է (նույն տեղում՝ § 128):

74. Վերոնշյալ հանգամանքների լույսի ներքո՝ Դատարանը եզրակացնում է, որ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանում գործի քննության ընթացքում դիմումատուի նկատմամբ այդպիսի խիստ և նվաստացնող միջոցի կիրառումը, որը պայմանավորված չէր անվտանգության որևէ իրական ռիսկով, անձի արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք է: Համապատասխանաբար, խախտվել է Կոնվենցիայի 3-րդ հոդվածը:

## II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄ

75. Դիմումատուն բողոքել է, որ 2007 թվականի փետրվարի 19-ից մարտի 12-ն ընկած ժամանակահատվածում իր կալանքը հիմնված չի եղել դատարանի որոշման վրա և հետևաբար՝ եղել է անօրինական: Նա հիմնվել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի վրա, համաձայն որի՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով...»:

### Ա. Ընդունելիություն

76. Դատարանը նշում է, որ սույն բողոքը Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի (ա) ենթակետի իմաստով ակնհայտ անհիմն չէ:

Դատարանն այնուհետև նշում է, որ այն անընդունելի չէ որևէ այլ հիմքով: Հետևաբար այն պետք է հայտարարվի ընդունելի:

## **Բ. Գործի ըստ էության քննություն**

### *1. Կողմերի փաստարկները*

77. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուի կալանքը 2007 թվականի փետրվարի 19-ից մինչև մարտի 12-ը համապատասխանում էր օրենքին, այն է՝ ՔԴՕ 138-րդ հոդվածի 3-րդ մասին:

78. Դիմումատուն փաստարկ է ներկայացրել առ այն, որ ՔԴՕ 138-րդ հոդվածի 3-րդ կետի վկայակոչումն ինքնին չէր կարող ծառայել իր կալանքը հիմնավորող իրավաչափ հանգամանք:

### *2. Դատարանի գնահատականը*

79. Դատարանը վերահաստատում է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածը երաշխավորում է ազատության և անձնական անձեռնմխելիության հիմնարար իրավունքը: Կոնվենցիայի համաձայն՝ այս իրավունքն առաջնային կարևորություն ունի «ժողովրդավարական հասարակությունում» (տե՛ս *De Wilde, Ooms and Versyp v. Belgium*, 1971 թվականի հունիսի 18, § 65, շարք «Ա», թիվ 12):

80. Երբ հարցը վերաբերում է ազատությունից զրկելուն, ապա հատկապես կարևոր է, որ պահպանվի իրավական որոշակիության ընդհանուր սկզբունքը: Հետևաբար, էապես կարևոր է, որ ներպետական իրավունքով հստակորեն սահմանված լինեն ազատությունից զրկելու պայմանները, իսկ օրենքն էլ կիրառման մեջ ինքնին կանխատեսելի լինի, որպեսզի համապատասխանի Կոնվենցիայով սահմանված «օրինականության» չափանիշին՝ չափանիշ, որով պահանջվում է, որ ցանկացած օրենք լինի բավարար չափով կոնկրետ, որպեսզի ցանկացած ոք, անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան խորհրդատվությամբ, հնարավորություն ունենա կանխատեսել իր գործողությունների հնարավոր հետևանքները՝ այնքանով, որքանով դա ողջամտորեն հնարավոր է տվյալ իրավիճակում (տե՛ս *Steel and Others v. the United Kingdom*, 1998 թվականի սեպտեմբերի 23, § 54, Ձեկույցներ 1998-VII):

81. Դատարանը նշում է, որ արդեն քննել է համանման բողոք Հայաստանի դեմ բերված մեկ այլ գործում, որում եկել է եզրահանգման, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում, քանզի դիմումատուի նկատմամբ կալանքը չի կիրառվել դատարանի որոշման հիման վրա և, հետևաբար, եղել է անօրինական՝ նշյալ դրույթի իմաստով (տե՛ս *Poghosyan v. Armenia*, թիվ 44068/07, §§ 56-64, 20 Դեկտեմբերի, 2011): Դատարանը չի տեսնում սույն գործով այլ եզրահանգում կատարելու որևէ պատճառ և եզրակացնում է, որ 2007



թվականի փետրվարի 19-ից մինչև մարտի 12-ը դիմումատուի կալանքը՝ 5-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով եղել է անօրինական:

82. Համապատասխանաբար, խախտվել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետը:

### III. ԿՈՆՎԵՆՏԻԱՅԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ԿԵՏԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄ

83. Դիմումատուն բողոքել է, որ ներպետական դատարանները չէին ներկայացրել իր՝ երկարատև կալանքի տակ գտնվելու պատճառները և՛ որ իր գրավով ազատվելն արգելված էր օրենքով՝ հանցանքի բնույթից ելնելով: Նա հիմնվել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի վրա, համաձայն որի՝

«3. Սույն հոդվածի 1-ին կետի (գ) ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով:»:

## Ա. Ընդունելիություն

### 1. *ratione personae համապատասխանություն*

#### (ա) Կողմերի փաստարկները

84. Կառավարությունը դիմումատուի գրավով ազատվելու անհնարինության առումով պնդել է, որ դիմումատուն չէր կարող վիճարկել 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտման գոհ լինելու հանգամանքը: Դա ճիշտ է, որ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը, իր 2006 թվականի դեկտեմբերի 12-ի որոշմամբ, դիմումատուին գրավով ազատ արձակելու մերժումը հիմնավորել է ՔԴՕ-ի 143-րդ հոդվածի 1-ին մասով, մինչդեռ Վերաքննիչ դատարանը չի վկայակոչել որևէ նման հիմնավորում՝ 2007 թվականի հունվարի 25-ին այդ որոշումը վերանայելիս: Վերաքննիչ դատարանը քննության է առել գործի կոնկրետ հանգամանքները և հիմնավորել է իր մերժումն այնպիսի հանգամանքներով, ինչպիսիք են՝ հիմնավոր կասկածի առկայությունը և նրա թաքնվելու ու արդարադատությանը խոչընդոտելու վտանգը: Հետևաբար, չի եղել գրավով ազատելու ավտոմատ մերժում՝ ՔԴՕ 143-րդ հոդվածի 1-ին մասի ներքո: Ի վերջո,

այդ հոդվածը չի կիրառվել դիմումատուի նկատմամբ և բողոքը, հետևաբար, *ratione personae* անհամապատասխան է:

85. Դիմումատուն բողոքել է, որ այն հանգամանքը, որ վերաքննիչ դատարանն իր 2007 թվականի հունվարի 25-ի որոշմամբ ակնհայտորեն չի վկայակոչել ՔԴՕ 143-րդ հոդվածի 1-ին մասը, իրեն չի զրկում զոհի կարգավիճակից: Վերաքննիչ դատարանը պարզապես չի քննարկել իրեն գրավով ազատելու հարցը: Ավելին, այն ուժի մեջ է թողել Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի որոշումը՝ այդպիսով հաստատելով գրավով ազատելը մերժելու դատարանի արված հիմնավորումները: Ամեն դեպքում, ՔԴՕ-ի 143-րդ հոդվածի 1-ին մասը Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից նրա նկատմամբ կիրառվել է հաջորդիվ երկու դեպքերում, մասնավորապես՝ 2007 թվականի հունվարի 12-ին և օգոստոսի 8-ին, դատական ակտերով, որոնք չէին հանդիսանում վերաքննիչ բողոքարկման առարկա: Ուստի, նա կարող էր պնդել այդ հիմքով 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտման զոհ լինելու հանգամանքը:

### (բ) Դատարանի գնահատականը

86. Դատարանը վերահաստատում է, որ Կոնվենցիայի 34-րդ հոդվածում օգտագործված «զոհ» եզրույթը վերաբերում է այն անձին, ում ուղղակիորեն վնաս է պատճառվել խնդրո առարկա գործողության կամ անգործության հետևանքով (տե՛ս, ի թիվս այլոց, *Vatan v. Russia*, թիվ 47978/99, § 48, 2004 թվականի հոկտեմբերի 7):

87. Տվյալ գործում դիմումատուն մի քանի անգամ հանդես է եկել իրեն գրավով կալանքից ազատելու միջնորդությամբ: Առնվազն երկու անգամ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը մերժել է դիմումատուի միջնորդությունը՝ ՔԴՕ-ի 143-րդ հոդվածի 1-ին նախատեսված հիմքերով՝ ակնհայտորեն հղում կատարելով այն դրույթին, ըստ որի՝ արգելվում է ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի կատարման մեջ մեղադրվող անձին ազատել գրավի կիրառմամբ (տե՛ս վերոնշյալ § 16 և § 20): Կառավարության պնդումն առ այն, որ վերաքննիչ դատարանը, այս որոշումներից մեկը վերանայելով, մերժել է գրավի կիրառումն այլ հիմնավորմամբ, հակասում է գործի նյութերին: Մասնավորապես, չնայած, որ վերաքննիչ դատարանն ուղղակի հղում չի կատարել ՔԴՕ-ի 143-րդ հոդվածի 1-ին մասին՝ այդ որոշման բովանդակությունն ու էությունը ցույց են տալիս, որ այն հաստատել է Մարզի ընդհանուր իրավասության դատարանի փաստարկները՝ ներառյալ գրավի մերժման հիմնավորումները: Այսպիսով՝ Դատարանը համաձայն է դիմումատուի այն պնդման հետ, որ նրա՝ գրավով ազատվելու միջնորդությունը մերժվել է ՔԴՕ-ի 143-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով, և՛ որ նա այդ հիմքով կարող էր հավակնել լինելու 5-րդ հոդվածի 3-րդ կետի ենթադրյալ խախտման զոհ: Հետևաբար, Կառավարության առարկությունը՝ կապված *ratione personae* համապատասխանության հետ, պետք է մերժվի:

## 2. Եզրակացություն

88. Դատարանը նշում է, որ սույն բողոքը Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի (ա) ենթակետի իմաստով ակնհայտ անհիմն չէ: Դատարանն այնուհետև նշում է, որ այն անընդունելի չէ որևէ այլ հիմքով: Հետևաբար այն պետք է հայտարարվի ընդունելի:

### Բ. Գործի ըստ էության քննություն

#### 1. Դիմումատուի՝ երկարատև կալանքը հիմնավորող հիմքերի ենթադրյալ բացակայությունը

##### (ա) Կողմերի փաստարկները

89. Կառավարությունը պնդել է, որ ներպետական դատարանները գործի նյութերի հիման վրա ներկայացրել են դիմումատուի՝ երկարատև կալանքի տակ գտնվելու վերաբերելի և բավարար պատճառներ, ինչպիսիք են նրա թաքնվելու, քննությանը խաչընդոտելու և նրա նախկին դատվածությունների վրա հիմնված՝ նոր հանցանք կատարելու վտանգը:

90. Դիմումատուն փաստարկ է ներկայացրել, որ ներպետական դատարանները չեն կարողացել հիմնավորել նրա երկարատև կալանքը և պարզապես հղում են կատարել համապատասխան իրավական նորմերին՝ առանց գործի կոնկրետ հանգամանքները հաշվի առնելու:

##### (բ) Դատարանի գնահատականը

###### (i) Ընդհանուր սկզբունքներ

91. Հանցագործության համար մեղադրվողը մինչդատական վարույթի ընթացքում միշտ պետք է ազատ արձակվի, քանի դեռ պետությունը չի կարողացել ցույց տալ, որ շարունակական կալանավորման համար գոյություն ունեն «հիմնավոր և բավարար» պատճառներ: (տե՛ս *Smirnova v. Russia*, թիվ 46133/99 և 48183/99, § 58, ՄԻԵԿ 2003-IX (քաղվածքներ); *Becciev v. Moldova*, թիվ 9190/03, § 53, 2005 թվականի հոկտեմբերի 4, և *Khodorkovskiy v. Russia*, թիվ 5829/04, § 182, 2011 թվականի մայիսի 31):

92. Ներպետական դատարանները պետք է քննության առնեն բոլոր փաստերը, որոնք կողմ կամ դեմ են փաստարկում այնպիսի հանրային շահի իրական պահանջի առկայությանը, որը, հաշվի առնելով անձի անմեղության կանխավարկածի սկզբունքը, արդարացնում է անձի ազատությունը հարգելու կանոնից կատարվող շեղումը, և պետք է դրանք ամրագրեն անձին ազատ արձակելու միջնորդությունների վերաբերյալ իրենց որոշումներում (տե՛ս *Letellier v. France*, 1991

թվականի հունիսի 26, § 35, շարք «Ա», թիվ 207): Ազատ արձակելուն կողմ կամ դեմ արված փաստարկները պետք է ընդհանուր և վերացական բնույթ չունենան (տե՛ս *Clooth v. Belgium*, 1991 թվականի դեկտեմբերի 12, § 44, շարք «Ա», թիվ 225):

93. Ձերբակալվածի կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկածի շարունակական գոյությունը անհրաժեշտ պայման է (*sine qua non*) տևական կալանքի օրինականության համար, սակայն որոշ ժամանակ անց այն դառնում է ոչ բավարար: Նման դեպքերում Դատարանը պետք է պարզի, թե արդյոք դատական մարմինների կողմից ներկայացված այլ հիմքերով շարունակվում է հիմնավորվել ազատությունից զրկելը: Եթե այդօրինակ հիմքերը «հիմնավոր» և «բավարար» են, Դատարանը պետք է պարզի նաև, թե քննությունն իրականացնելիս իրավասու ներպետական մարմինները արդյոք դրսևորել են «պատշաճ ջանադրություն» (տե՛ս *Labita v. Italy* [ՄՊ], թիվ 26772/95, § 153, ՄԻԵԿ 2000-IV):

94. Կոնվենցիայի նախադեպային իրավունքը մշակել է հանցագործության համար կասկածվող անձին մինչև դատավճիռը կալանքի տակ պահելու համար ընդունելի չորս հիմնական հիմքեր. մեղադրյալի՝ դատաքննությանը չներկայանալու վտանգը (տե՛ս *Stögmüller v. Austria*, 1969 թվականի նոյեմբերի 10, § 15, շարք «Ա», թիվ 9), վտանգը, որ մեղադրյալը ազատ արձակվելու դեպքում կխոչընդոտի արդարադատության իրականացմանը, (տե՛ս *Wemhoff v. Germany*, 1968 թվականի հունիսի 27, § 14, շարք «Ա», թիվ 7) կամ կկատարի նոր հանցանքներ (տե՛ս *Matznetter v. Austria*, 1969 թվականի նոյեմբերի 10, § 9, շարք «Ա», թիվ 10) կամ կկատարի հասարակական անկարգություններ (տե՛ս *Letellier-ի* գործը, վերևում մեջքերված, § 51):

95. Քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու վտանգավորության աստիճանը չի կարող չափվել միայն նախատեսվող պատժի խստության հիման վրա: Այն պետք է գնահատվի մի շարք այլ վերաբերելի գործոնները հաշվի առնելով, որոնք կարող են կա՛մ հաստատել քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու վտանգի առկայությունը, կա՛մ կարող են այն դարձնել այնքան չնչին, որ հնարավոր չլինի հիմնավորել կալանքը նախքան դատական քննությունը (տե՛ս *Yağci Yagc?and Sargin v. Turkey*, 1995 թվականի հունիսի 8, § 52, շարք «Ա», թիվ 319Ա): Քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու վտանգը պետք է գնահատվի այնպիսի հանգամանքների լույսի ներքո, ինչպիսիք են անձի բնութագիրը, նրա բարոյականությունը, տուն ունենալու հանգամանքը, զբաղվածությունը, ունեցվածքը, ընտանեկան կապերը, ինչպես նաև բոլոր կապերն այն պետության հետ, որում նա հետապնդվում: Ծանր պատժի ակնկալիքը և ապացույցների ծանրակշիռ լինելը կարող են վերաբերելի լինել, սակայն որպես այդպիսին որոշիչ չեն, և հնարավոր է, որ անհրաժեշտ լինի օգտագործել երաշխիքներ ստանալու հնարավորությունը՝ բոլոր վտանգները չեզոքացնելու նպատակով (տե՛ս

*Neumeister v. Austria*, 1968 թվականի հունիսի 27, § 10, շարք «Ա», թիվ 8):

96. Մեղադրյալի կողմից վարույթի պատշաճ ընթացքը խոչընդոտելու վտանգի վրա չի կարելի հիմնվել վերացական կարգով (*in abstracto*). այն պետք է հիմնավորել փաստական տվյալներով (տե՛ս *Trzaska v. Poland*, թիվ 25792/94, § 65, 2000 թվականի հուլիսի 11):

(ii) *Վերոհիշյալ սկզբունքների կիրառումը սույն գործում*

97. Սույն գործում Դատարանը նշում է, որ դիմումատուին կալանավորելու և կալանքի ժամկետը երկարաձգելու մասին որոշում կայացնելիս ներպետական դատարանները հիմնվել են մեղադրանքի ծանրության և դիմումատուի՝ քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու և վարույթը խոչընդոտելու վտանգի վրա, ինչպես նաև, որոշ դեպքերում՝ այն փաստի վրա, որ որոշակի քննչական գործողությունների կատարման անհրաժեշտություն կա և, որ քննությունը դեռ շարունակվում է:

98. Դատարանը վերահաստատում է, որ հետագա քննչական գործողություններ կատարելու կամ քննությունն ավարտված չլինելու հիմնավորումները չեն համապատասխանում անձի քննության ընթացքում կալանքի տակ պահելու 5-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված ընդունելի որևէ հիմքին:

99. Ինչ վերաբերում է թաքնվելու կամ վարույթին խոչընդոտելու վտանգին, ապա Դատարանը նշում է, որ թե՛ Մարզի ընդհանուր իրավասության դատարանը, թե՛ Վերաքննիչ դատարանը դիմումատուին կալանավորելու և կալանքի ժամկետը երկարաձգելու կարգադրություն տալու իրենց որոշումներում սահմանափակվել են նշված հիմքերը վերացական և կարծրատիպային ձևով կրկնելով՝ առանց մատնանշելու որևէ պատճառ առ այն, թե ինչու են իրենք հիմնավորված համարել այն ենթադրությունները, թե դիմումատուն կարող էր թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից կամ խոչընդոտել վարույթի ընթացքին: Նրանք չեն էլ փորձել հերքել դիմումատուի փաստարկները: Այն հանցագործության ծանրության ընդհանրական վկայակոչումը, որի մեջ մեղադրվում էր դիմումատուն, և որի վրա մի քանի առիթով հիմնվել են դատարանները, չի կարող ենթադրյալ վտանգների համար բավարար հիմնավորում համարվել:

100. Վերոնշյալի լույսի ներքո՝ Դատարանը գտնում է, որ այն պատճառաբանությունները, որոնց հիման վրա Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի և Քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի կողմից դիմումատուի կալանավորման, կալանքի ժամկետը երկարաձգելու և գրավով չազատելու մասին որոշումներ են ընդունվել, չեն եղել «հիմնավոր և բավարար»: Համապատասխանաբար, խախտվել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետը:

## 2. Գրավով ազատելու անհնարինություն

### (ա) Կողմերի փաստարկները

101. Դիմումատուն պնդում է, որ ՔԴՕ-ի 143-րդ հոդվածի 1-ին մասի հիմնավորմամբ իրեն գրավով կալանքից ազատելու մերժումը հակասում է 5-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված երաշխիքին:

102. Կառավարությունն այս կետը չի մեկնաբանել:

### (բ) Դատարանի գնահատականը

103. Դատարանը վերահաստատում է, որ իշխանությունները, որոշում կայացնելիս անձի կալանավորման կամ ազատման վերաբերյալ, պարտավոր են հաշվի առնել այլընտրանքային միջոցներ նրա՝ դատարան ներկայանալու համար: Իսկապես, այդ հոդվածը սահմանում է ոչ միայն «ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու» իրավունք, այլև նախատեսում է, որ «ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով» (տե՛ս *Jablonski v. Poland*, no. 33492/96, § 83, 21 դեկտեմբերի, 2000):

104. Դատարանն այնուհետև նշում է, որ այն նախկինում գտել է 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում մի շարք գործերում, որտեղ գրավի միջնորդությունն ինքնաբերաբար մերժվել է՝ օրենքի վկայակոչմամբ (տե՛ս *Caballero v. the United Kingdom [GC]*, թիվ 32819/96, § 21, ECHR 2000-II, և *S.B.C. v. the United Kingdom*, թիվ 39360/98, §§ 23-24, 19 հունիսի, 2001):

105. Տվյալ գործում դիմումատուի՝ գրավով ազատվելու միջնորդությունը նմանապես մերժվել է այն հիմնավորմամբ, որ նա մեղադրվում է ծանր հանցագործության մեջ, և՛ ՔԴՕ-ի 143-րդ հոդվածի 1-ին մասն արգելում է գրավի կիրառում նման դեպքերում: Դատարանը գտնում է, որ դիմումատուի գրավի միջնորդության նման ինքնաբերաբար մերժումը՝ առանց նրա կալանքի կոնկրետ հանգամանքների նկատմամբ դատարանի հսկողության, համահունչ չի եղել 5-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված երաշխիքներին:

106. Համապատասխանաբար, խախտվել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետը:

## III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ԿԵՏԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄ

107. Դիմումատուն բողոքել է առ այն, որ 2006 թվականի դեկտեմբերի 12-ին ընդհանուր իրավասության դատարանում կալանքի վերցնելու քննության վարույթը մրցակցային չի եղել և չի ապահովել կողմերի հավասարությունը: Ավելին, նրա փաստարկները՝ կապված հիմնավոր կասկածի բացակայության հետ, համապատասխան

քննության չեն արժանացել: Վերջապես, Վերաքննիչ դատարանը հրաժարվել է քննության առնել նրա՝ 2007 թվականի հունվարի 27-ի բողոքը: Նա վկայակոչել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետը, որն այնքանով, որքանով դա վերաբերում է գործին, շարադրված է հետևյալ կերպ՝

«4. Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է:»

## **Ա. Ընդունելիությունը**

### *1. Մրցակցային դատավարություն և կողմերի հավասարություն*

108. Կառավարությունը պնդել է, որ 5-րդ հոդվածի 4-րդ կետը վերաբերելի չէր 2006 թվականի դեկտեմբերի 12-ի՝ կալանքի հարցի քննությանը, քանի որ այն որոշում էր քննիչի միջնորդությամբ դիմումատուի կալանքի ժամկետի երկարաձգման հետ կապված հարցերը, մինչդեռ սույն հոդվածը վերաբերելի էր միայն կալանավորված անձի կողմից նախաձեռնված վարույթին: Հետևաբար, խնդրի առարկա՝ կալանքի հարցի քննությունը սահմանված էր 5-րդ հոդվածի 3-րդ կետով, որով չէր պահանջվում, որպեսզի առաջին ատյանի դատարանի վարույթը լիներ մրցակցային:

109. Դիմումատուն պնդել է, որ Կառավարության փաստարկը 5-րդ հոդվածի 4-րդ կետի ոչ կիրառելի լինելու վերաբերյալ անընդունելի է: Նա պնդել է, որ 5-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի երաշխիքները կիրառելի են միաժամանակ: Այն փաստը, որ քննվում էր նրա կալանքի ժամկետի երկարաձգման հարցը, էական չէ. այն, ինչը կարևոր էր, այդ քննության ժամանակ իր փաստարկների էությունն էր, մասնավորապես այն, որ նա զրկված է եղել կարևոր փաստաթղթերի հետ ծանոթանալու հնարավորությունից: Հետևաբար, 5-րդ հոդվածի 4-րդ կետը եղել է կիրառելի:

110. Դատարանը նշում է, որ Կառավարության առարկությունը սերտորեն կապված է դիմումատուի գանգատի բովանդակության հետ և, հետևաբար, պետք է կցվի գործի ըստ էության քննությանը:

### *2. Եզրակացություն*

111. Դատարանը նշում է, որ սույն բողոքը Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի (ա) ենթակետի իմաստով ակնհայտ անհիմն չէ: Դատարանն այնուհետև նշում է, որ այն անընդունելի չէ որևէ այլ հիմքով: Հետևաբար այն պետք է հայտարարվի ընդունելի:

## **Բ. Գործի ըստ էության քննությունը**

### *1. Մրցակցային դատավարություն և կողմերի հավասարություն*

#### **(ա) Կողմերի փաստարկները**

##### *(i) Կառավարությունը*

112. Կառավարությունը պնդել է, որ ՔԴՕ-ի 201-րդ հոդվածը թույլ է տալիս, որպեսզի նախաքննության նյութերը հրապարակվեն միայն քննչական մարմնի թույլտվությամբ: Հետևաբար, նախքան 2006 թվականի դեկտեմբերի 12-ի դատական նիստը՝ քննիչը կալանքի ժամկետի երկարաձգման հարցով իր միջնորդության հետ միասին Մարզի ընդհանուր իրավասության դատարան է ներկայացրել իր միջնորդությունը հիմնավորող որոշ փաստաթղթեր: Միևնույն ժամանակ քննիչը նպատակահարմար չի գտել այդ փաստաթղթերը ներկայացնել դիմումատուին և նրա փաստաբանին, քանի որ ըստ օրենքի մեղադրյալն իրավունք ուներ ծանոթանալ գործի նյութերին միայն նախաքննության ավարտից հետո: Այնուամենայնիվ, սա խնդիր չի առաջացրել, քանի որ տվյալ վարույթը, ի հակադրություն 5-րդ հոդվածի 4-րդ կետի, առնչվում էր 5-րդ հոդվածի 3-րդ կետին, և մրցակցային դատավարության պահանջը չէր կիրառվում:

##### *(ii) Դիմումատուն*

113. Դիմումատուն պնդել է, որ քննիչը դատավորին, մինչև նրա խորհրդակցական սենյակ հեռանալը, ներկայացրել է գործի նյութերը, որոնք դիմումատուին ծանոթ չեն եղել: Նրան տրամադրվել են միայն դատավարական բնույթի փաստաթղթեր, այն է՝ քրեական գործ հարուցելու մասին որոշումը, ձերբակալության արձանագրությունը և մեղադրական եզրակացությունը, որոնք կցված են եղել քննիչի միջնորդությանը: Այն փաստը, որ դատավորն իր հետ խորհրդակցական սենյակ է տարել գործի բոլոր նյութերը, նշանակում է, որ դատավորն իր որոշումը կայացրել է որոշակի փաստաթղթերի հիման վրա, որոնց կապակցությամբ դիմումատուն առարկելու հնարավորություն չի ունեցել: 2006 թվականի դեկտեմբերի 12-ի որոշմամբ նշված է եղել, որ այն հիմնվում է քննիչի միջնորդության հիմնավորվածությունն ապահովող նյութերի վրա. այնպիսի նյութերի, որոնց վերաբերյալ նա հնարավորություն չի ունեցել ո՛չ մեկնաբանել, ո՛չ էլ վիճարկել:

#### **(բ) Դատարանի գնահատականը**

114. Դատարանը, նախ, կանդրադառնա տվյալ վարույթի նկատմամբ 5-րդ հոդվածի 4-րդ կետի կիրառելիության հարցին, մասնավորապես՝



2006 թվականի դեկտեմբերի 12-ին տեղի ունեցած կալանքի տակ պահելու հարցով դատական նիստին, որի ժամանակ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը որոշել էր բավարարել դիմումատուի կալանքի ժամկետի երկարաձգման մասին քննիչի միջնորդությանը:

115. Այն նշում է, որ նման առարկություն, ինչպիսին բարձրացվել է Կառավարության կողմից սույն գործի դեպքում, քննվել և մերժվել է *Lebedev v. Russia* գործի դեպքում (թիվ 4493/04, 2007 թվականի հոկտեմբերի 25-ի վճիռ): Այդ գործով Դատարանը գտել է, որ քիչ նշանակություն ունեւր այն՝ արդյոք ներպետական դատարանը որոշում էր կայացրել պաշտպանության կողմի ներկայացրած ազատման վերաբերյալ դիմումի, թե մեղադրող կողմի ներկայացրած կալանավորման մասին միջնորդության վերաբերյալ (տե՛ս նույն տեղում՝ § 72): Սույն եզրակացությանը հանգելիս՝ Դատարանը հղում է կատարել մի շարք գործերի, որոնց դեպքում նա որոշել էր, որ մեղադրող կողմի միջնորդությամբ դատարանի կողմից դիմումատուի կալանքի ժամկետի երկարաձգումը նաև ներգրավել է 5-րդ հոդվածի 4-րդ կետի երաշխիքները (տե՛ս *Grauzinis v. Lithuania*, թիվ 37975/97, § 33, 2000 թվականի հոկտեմբերի 10, *Włoch Włochv. Poland*, թիվ 27785/95, §§ 125. և հաջորդները, ՄԻԵԿ 2000XI, և *Telecki v Poland* (որոշում) թիվ 56552/00, 2003 թվականի հուլիսի 3): Այնուհետև, Դատարանը եզրակացրել է, որ 5-րդ հոդվածի 4-րդ կետը վերաբերելի էր այդ վարույթի դեպքում, որով որոշվում էին դիմումատուի կալանքի ժամկետի երկարաձգման հարցերը (*տե՛ս Lebedev, վերևում մեջբերված, § 74*): Հետևաբար, Դատարանը եզրակացնում է, որ 5-րդ հոդվածի 4-րդ կետի երաշխիքները վերաբերելի են 2006 թվականի դեկտեմբերի 12-ին տեղի ունեցած կալանքի հարցի քննությանը և որոշում է մերժել Կառավարության առարկությունը:

116. Դատարանը վերահաստատում է, որ 5-րդ հոդվածի 4-րդ կետը պահանջվում է, որպեսզի կալանքի դեմ բերված բողոքը քննելիս դատարանը ապահովի դատական քննության երաշխիքները: Վարույթը պետք է լինի մրցակցային, և միշտ պետք է ապահովվի «կողմերի հավասարությունը» մեղադրանքի կողմի և կալանավորված անձի միջև: Կողմերի հավասարությունն ապահովված չի համարվում, եթե պաշտպանին մերժում են տրամադրել գործով նախաքննությամբ ձեռք բերված այն փաստաթղթերը, որոնք կարևոր են նրա պաշտպանյալին կալանքի տակ պահելու օրինականությունը արդյունավետորեն վիճարկելու համար (տե՛ս *Lamy v. Belgium*, 1989 թվականի մարտի 30, § 29, շարք «Ա», թիվ 151, *Nikolova v. Bulgaria* [GC], թիվ 31195/96, § 58, ՄԻԵԿ 1999II, և *Garcia Alva v. Germany*, թիվ 23541/94, § 39, 2001 թվականի փետրվարի 13):

117. Անդրադառնալով սույն գործի հանգամանքներին՝ Դատարանը նշում է, որ քննիչը 2006 թվականի դեկտեմբերի 8-ին միջնորդություն է ներկայացրել Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ պահանջելով երկարաձգել դիմումատուի կալանքի ժամկետը:

Միջնորդությանը կից ներկայացվել են գործի նյութերում առկա որոշ փաստաթղթեր, ինչպիսին են քրեական գործ հարուցելու մասին որոշումը, դիմումատուի ձերբակալման արձանագրությունը, մեղադրական եզրակացությունը, այսինքն՝ այն փաստաթղթերը, որոնց դիմումատուն արդեն ծանոթացել էր: Այս միջնորդությունը քննության է առնվել 2006 թվականի դեկտեմբերի 12-ին, որին և դիմումատուն և նրա պաշտպանը ներկա են գտնվել: Ինչևէ, մինչև խորհրդակցական սենյակ հեռանալը որոշում կայացնելու համար դատավորը քննիչից խնդրել է գործի բոլոր նյութերը: Կառավարությունն ընդունել է, որ դիմումատուն գործի բոլոր նյութերին ծանոթ չի եղել:

118. Դատարանը չի ցանկանում ենթադրություններ անել, թե արդյոք դիմումատուի կալանքի ժամկետը երկարաձգելու հարցը քննելիս՝ նախագահող դատավորը հիմնվել է այն փաստաթղթերի վրա, որոնց դիմումատուն ծանոթ չի եղել: Այն փաստը, որ մինչև խորհրդակցական սենյակ հեռանալը նախագահող դատավորը խնդրել է գործի բոլոր նյութերը, լուրջ կանխավարկած է ստեղծում, որ հենց այդպես էլ եղել է: Ամեն դեպքում, դատավորի կողմից քննիչի միջնորդության քննության ձևն ինքնին բավարար է ենթադրելու, որ դիմումատուն զրկված է եղել այդ միջնորդությունը վիճարկելու արդյունավետ հնարավորությունից, հետևաբար՝ չի ապահովվել վարույթի մրցակցությունը և կողմերի միջև հավասարությունը:

119. Համապատասխանաբար, խախտվել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետը:

## *2. Դատական վերահսկողության բնույթ և սահմաններ*

120. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուի՝ քննիչի միջնորդությամբ 2006 թվականի դեկտեմբերի 8-ի կալանքի օրինականության նկատմամբ իրականացվող դատական վերահսկողությունը համապատասխանում էր 5-րդ հոդվածի 4-րդ կետին:

121. Դիմումատուն պնդել է, որ 2006 թվականի դեկտեմբերի 12-ին կալանքի հարցով քննության ժամանակ դատարանը հրաժարվել է քննարկել «հիմնավոր կասկածի» առկայության հարցը: Դատավորը դա հիմնավորել է ասելով, որ դատարանը չի քննել դիմումատուի մեղքի հարցը: Այդ մերժումը նեղացրել է դատական վերահսկողության շրջանակը և բնույթը 5-րդ հոդվածի 4-րդ կետով անընդունելի սահմաններում:

122. Դատարանը նշում է, որ այս բողոքը նմանապես վերաբերում է 2006 թվականի դեկտեմբերի 12-ի քննությանը և սերտ կապված է վերը քննարկվածի հետ (տե՛ս վերը՝ §§ 114-119): Վերը նշված եզրահանգումներից ելնելով՝ Դատարանն անհրաժեշտ չի համարում սույն գանգատը քննել առանձին:

## *3. 2007 թվականի հունվարի 27-ի բողոքը քննության չառնելը*

### (ա) Կողմերի փաստարկները

123. Կառավարությունը ներկայացրել է, որ վերաքննիչ դատարանի՝ դիմումատուի բողոքը 2007 թվականի հունվարի 27-ին առանց քննության թողնելու մասին որոշումը համապատասխանել է 5-րդ հոդվածի 4-րդ կետին: Այդ որոշումը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ գործով նախաքննությունն ավարտված էր և գործը դուրս էր մնում մինչդատական վարույթում դատական վերահսկողության սահմաններից:

124. Դիմումատուն պնդել է, որ 2007 թվականի հունվարի 27-ի իր բողոքը քննության չառնելը խախտել է 5-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված երաշխիքները: Նախ, վերաքննիչ դատարանն իրավասու չէր առանց քննության թողնել նրա բողոքը՝ թե՛ ներպետական օրենսդրության, և թե՛ պրակտիկայի համաձայն: Ավելին, անընդունելի էր իր բողոքի քննությունը հետաձգել մինչև 2007 թվականի փետրվարի 19-ը, այնուհետև հրաժարվել այն քննելուց՝ նախաքննությունն ավարտված ինելու հիմնավորմամբ:

### (բ) Դատարանի գնահատականը

125. Դատարանը վերահաստատում է, որ իր նախադեպային իրավունքին համապատասխան՝ 5-րդ հոդվածի 4-րդ կետը, 6-րդ հոդվածի 1-ին կետի նման, ապահովում է դատարանի մատչելիության իրավունքը, որը կարող է ենթարկվել միայն այնպիսի ողջամիտ սահմանափակումների, որոնք չեն խախտում դրա էությունը (տե՛ս *Shishkov v. Bulgaria*, թիվ 38822/97, § 82-90, ECHR 2003-I (հատվածներ), և *Bochev v. Bulgaria*, թիվ 73481/01, § 70, 13 նոյեմբերի, 2008):

126. Դատարանը նշում է, որ այն արդեն նման բողոք քննել է Հայաստանի դեմ, որտեղ սահմանվել է, որ դիմումատուի կալանքի նկատմամբ դատական վերահսկողության մերժումը միայն այն հիմքով, որ գործն արդեն մինչդատական վարույթում չէ, նրա՝ 5-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան վարույթ հարուցելու իրավունքի ոչ արդարացված սահմանափակում է և եզրակացրել է, որ տեղի է ունեցել այդ դրույթի խախտում (տե՛ս *Poghosyan v. Armenia*, թիվ 44068/07, §§ 78-81, 20 դեկտեմբերի, 2011): Սույն գործի հանգամանքները գրեթե նույնական են (տե՛ս վերոնշյալ § 26): Հետևաբար, Դատարանը չի տեսնում սույն գործով այլ եզրահանգում կատարելու որևէ պատճառ:

127. Համապատասխանաբար, խախտվել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետը:

V. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԱՅԼ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

128. Վերջապես, դիմումատուն ներկայացրել է մի շարք այլ գանգատներ՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին և 4-րդ կետերով և 6-րդ հոդվածի 1-ին կետով:

129. Հաշվի առնելով իր տրամադրության տակ գտնվող բոլոր նյութերը և այնքանով, որքանով այդ բողոքները գտնվում են իր դատազրույթյան ներքո՝ Դատարանը գտնում է, որ դրանցով չի բացահայտվում Կոնվենցիայով կամ դրան կից Արձանագրություններով սահմանված իրավունքների և ազատությունների առերևույթ խախտման որևէ դեպք: Հետևաբար, համաձայն Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի, գանգատի սույն մասը պետք է մերժվի՝ ակնհայտորեն անհիմն լինելու պատճառով:

## VI. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅՈՒՆ

130. Կոնվենցիայի 41-րդ հոդվածով նախատեսվում է՝

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

### Ա. Վնաս

131. Դիմումատուն պահանջել է ընդհանուր առմամբ 11,761 եվրո որպես նյութական վնասի փոխհատուցում: Սրա մեջ ներառվում են իր ընտանիքի կողմից մատակարարված սննդի ծանրոցների ծախսը (5,900 եվրո), կալանավայր հասնելու իր ընտանիքի ծախսերը (1,280 եվրո) և իր կալանքի՝ տասնչորս ամիսների բաց թողնված եկամուտը (4,581 եվրո): Այս վերջին պահանջին կից դիմումատուն ներկայացրել է մասնավոր կազմակերպության կողմից տրված վկայականն առ այն, որ նա աշխատել է այնտեղ որպես քարհանքի աշխատող՝ ամսեկան 152,000 հայկական դրամ միջին աշխատավարձով և ազատվել է աշխատանքից 2006 թվականի հոկտեմբերի 19-ին՝ որպես արդյունք իր ձերբակալման: Ապա նա պահանջել է 30,000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում:

132. Կառավարությունը պնդել է, որ սննդի ծանրոցների համար ենթադրյալ ծախսերը անհրաժեշտ չէին, քանի որ դիմումատուն ստանում էր սնունդ կալանավայրում: Ավելին՝ ենթադրյալ սննդի ծանրոցների և ճանապարհային ծախսերը որևէ կապ չունեն նրա կրած դրամական վնասի հետ: Ավելին՝ դրանք պատշաճ փաստաթղթային հիմնավորված չեն: Ինչ վերաբերում է ենթադրյալ բաց թողնված եկամտին, ապա պատճառական կապ չկար դիմումատուի կալանքի և աշխատանքի կորստի միջև: Ավելին՝ դիմումատուի կողմից ներկայացված տեղեկանքը չի կարող համարվել իր պահանջը

հիմնավորող պատշաճ ապացույց: Որպես այդպիսի ապացույց պետք է լինի կամ աշխատանքային պայմանագիրը կամ դիմումատուի աշխատանքային գրքույկից համապատասխան քաղվածք:

133. Դատարանը համարում է, որ ենթադրյալ սննդի և ճանապարհային ծախսերը որևէ կապ չունեն դիմումատուի կողմից կրած նյութական վնասի հետ և նրա ընտանիքի անդամների կողմից կրած ենթադրյալ վնասներ են, որոնք տվյալ գործով դիմումատու չեն և հետևաբար՝ չեն կարող ճանաչվել որպես նշված խախտումներից ուղղակիորեն տուժած անձինք (տե՛ս *Harutyunyan v. Armenia*, թիվ 36549/03, § 71, ECHR 2007-III): Ինչ վերաբերում է դիմումատուի՝ բաց թողնված եկամտի պահանջին, Դատարանը չի տեսնում պատճառական կապ քննարկվող վնասի և հայտնաբերված խախտումների միջև: Միաժամանակ, Դատարանը գտնում է, որ դիմումատուն անկասկած կրել է ոչ նյութական վնաս՝ որպես հայտնաբերված խախտումների հետևանք, և որոշում է սահմանել 8,000 եվրո փոխհատուցում:

#### **Բ. Ծախսեր և ծախքեր**

134. Դիմումատուն պահանջել է նաև 3,030 եվրո դատական ծախսերի և ծախքերի համար, մասնավորապես՝ 3,000 եվրո իրավաբանական ծառայության դիմաց ծախսերի և 3 եվրո փոստային ծախսերի համար: Իր պահանջին կից նա ներկայացրել է փաստաբանի աշխատանքի և երկու փոստային ստացականներ (2008 թվականի մարտի 20՝ 2,820 ՀՀ դրամ և 2008 թվականի փետրվարի 5՝ 5,650 ՀՀ դրամ):

135. Կառավարությունը նշում է, որ դիմումատուն չի ներկայացրել որևէ ապացույց, որ իրավաբանական ծառայության դիմաց ծախսերն իրականում եղել են: Դա նշանակում է, որ նրա ներկայացուցիչներն աշխատել են առանց վճարի: Ինչ վերաբերում է փոստային ծախսերին, ապա դիմումատուն ներկայացրել է ընդամենը երկու ստացական, որոնցով չեն երևում ենթադրյալ բոլոր ծախսերը:

136. Դատարանի նախադեպային իրավունքին համապատասխան՝ դիմումատուն ունի ծախսերի ու ծախքերի փոխհատուցման իրավունք՝ այնքանով, որքանով ցույց է տրվել, որ դրանք իրականում կատարվել են, եղել են անհրաժեշտ, և դրանց չափը եղել է ողջամիտ: Սույն գործի շրջանակներում դիմումատուն իրավաբանների ծախսերի վերաբերյալ իր պահանջը ապացուցող փաստաթուղթ չի ներկայացրել: Հետևաբար, այս պահանջը պետք է մերժվի: Ինչ վերաբերում է փոստային ծախսերին, հաշվի առնելով իր տրամադրության տակ փաստաթղթերը և վերը նշված չափորոշիչները՝ Դատարանը ողջամիտ է համարում է ծախսերի ու ծախքերի դիմաց 18 եվրո գումարի փոխհատուցումը:

#### **Գ. Չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույք**

137. Դատարանը պատշաճ է համարում, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնվի Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած փոխառության առավելագույն տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոսային կետ:

## ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ՝ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ՝

1. Հայտարարում է ընդունելի դիմումատուի՝ երկաթե վանդակում պահվելու գանգատը Կոնվենցիայի 3-րդ հոդվածի և 5-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 4-րդ կետերով, 2007 թվականի փետրվարի 19-ից մարտի 12-ը դիմումատուի կալանավորման անօրինականությունը, նրա շարունակական կալանքի համար պատճառների բացակայության, գրավով ազատելու անհնարինությունը, 2006 թվականի դեկտեմբերի 12-ի կալանքի քննության ընթացքում մրցակցային դատավարություն և կողմերի հավասարություն չապահովելը, հիմնավոր կասկածների վերաբերյալ նրա փաստարկները չքննարկելը, Վերաքննիչ դատարանի մերժումը՝ քննելու նրա 2007 թվականի հունվարի 27-ի բողոքը, մինչդեռ գանգատի մնացած մասն անընդունելի.

2. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում դատական քննության ընթացքում դիմումատուին երկաթե վանդակում պահելու առումով.

3. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ 2007 թվականի փետրվարի 19-ից մարտի 12-ը դիմումատուի առանց օրինական հիմքի կալանքի տակ պահելու առումով.

4. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում դիմումատուին երկարատև կալանքի տակ պահելու համար անհրաժեշտ և բավարար պատճառներ չներկայացնելու առումով.

5. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում դիմումատուի՝ գրավով ազատվելու միջնորդության ինքնաբերաբար մերժման առումով.

6. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի խախտում այն առումով, որ 2006 թվականի դեկտեմբերի 12-ին Լոռու մարզի ընդհանուր իրավահավասարության դատարանում վարույթը չի եղել մրցակցային, և չի ապահովվել կողմերի հավասարությունը.

7. Վճռում է, որ կարիք չկա քննելու Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետը հիմնավոր կասկածի վերաբերյալ իր փաստարկներն համապատասխան ներկայացնելու հնարավորության բացակայության վերաբերյալ.

8. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի խախտում՝ կալանքի դեմ դիմումատուի 2007 թվականի հունվարի 27-ի բողոքը քննության չառնելու առումով.

9. Վճռում է, որ՝

(ա) պատասխանող Պետությունը, Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան վճիռն ուժի մեջ մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում, պետք է դիմումատուին վճարի հետևյալ գումարները, որոնք պետք է փոխարկվեն պատասխանող պետության ազգային արժույթով՝ վճարման օրը գործող փոխարժեքով.

i) ոչ նյութական վնասի դիմաց՝ 8,000 եվրո (ութ հազար եվրո)՝ գումարած նշված գումարի վրա հաշվարկվող որևէ տեսակի հարկեր

ii) ծախսերի և ծախքերի դիմաց՝ 18 եվրո (տասնութ եվրո)՝ գումարած նշված գումարի վրա հաշվարկվող որևէ տեսակի հարկեր

(բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո մինչև վճարման օրը պետք է վճարվի վերը նշված գումարի պարզ տոկոս՝ պարտավորությունների չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած փոխառության առավելագույն տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ.

10. Մերժում է դիմումատուի՝ արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով և գրավոր կերպով ծանուցվել է 2012 թվականի հունիսի 26-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ և 3-րդ կետերի:

Santiago Quesada  
Քարտուղար

Josep Casadevall  
Նախագահ